604

1. Օրերն ենք հաշվում, ժամերն ենք հաշվում, Տե՛ր Հիսուս,
Թե երբ կինչի փողը հրեշտակաց, Տե՛ր Հիսուս,
Որ Քո ողջ փառքով Դու մեզ երևաս, Տե՛ր Հիսուս:

Երկնքից մեզ մոտ ե՛կ, Տե՛ր Հիսուս,
Ամպերով շուտով ե՛կ, Տե՛ր Հիսուս,
Երկնքից մեզ մոտ ե՛կ, Տե՛ր Հիսուս,
Կարոտով սպասում ենք Քեզ:

2. Ու Քո ողջ փառքով նստած աջ կողմում, Տե՛ր Հիսուս,
Բարեխոսում ես բոլորիս համար, Տե՛ր Հիսուս,
Որ ապրենք հավերժ արքայության մեջ, Տե՛ր Հիսուս:

3. Ու մենք ամեն ժամ աղոթում ենք Քեզ, Տե՛ր Հիսուս,
Որ Դու ներես մեր բազում մեղքերը, Տե՛ր Հիսուս,

Որ մենք մաքրվենք, կամքիդ մեջ ապրենք, Տե՛ր Հիսուս:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025